

Արձանագրություն

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-թ. մայիսի 26-ի թիվ 10-նիստից

Օրակարգը՝

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2022-23 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Տ. Վ. Ղոչիկյան- Հարգելի գործընկերներ Գիտական խորհրդի 16 անդամներից ներկա են 14-ը: Այսօրվա օրակարգի հետ պայմանավորված ավելացումներ կամ փոփոխություններ ունեք՝

-Տ. Վ. Ղոչիկյան, -«Եթե օրակարգը ընդունելի է անցնենք մեր նիստին:

Այժմ լսենք ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

Շ. Մարգարյանի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ»

Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր - Շ. Ա. Մարգարյան (Հաշվետվությունը հակիրճ ներկայացվում է): Նա նշեց, որ ամբիոնը սպասարկում է քիմիայի ֆակուլտետի՝ քիմիա և սննդի անվտանգություն բաժիններին: Կենսաբանության ֆակուլտետի 3 բաժիններին և ֆարմացիայի ինստիտուտին: Ամբիոնում գործում են 3 թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրեր: Ծրագրերից 2-ի ղեկավարն է ամբիոնի ղոցենտ Հ. Ղազոյանը, իսկ մյուս ծրագրի ղեկավարն է պրոֆեսոր Կ. Ռ. Գրիգորյանը: Ամբիոնի ղոցենտ Լ. Ս. Գաբրիելյանը արժանացել է տարվա լավագույն դասախոս 1-ին մրցանակին: Ամբիոնը համալրվել է նորագույն սարքավորումներով: Հաշվետու տարում ոչմիայն ամրապնդվել է միջամբիոնային համագործակցությունը, որի շրջանակներում հրատարակվել է 4 գիտական աշխատանք, այլև ձևավորվել են նոր կապեր՝ մասնավորապես Թբիլիսիի պետական

համալսարանի հետ: Ապրիլ ամսին եղել է մեր դասախոսների առաջին գործուղումը և երկրորդ գործուղումը պլանավորված է սեպտեմբերին: Հաշվետու տարում հրապարակվել է 6 հոդված և 5 թեզիս:

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին

1. Տ. Վ. Ղոչիկյան,- Դուք ունեք թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրեր՝ քանի ուսանող է ընդրկված այդ ծրագրերում

-Շ. Ա. Մարգարյան- Թեմատիկ ֆինանսավորմամբ երկու ծրագրերում սահմանափակում կա՝ այն է, որ ծրագրին կարող է մասնակցել միայն մագիստրատուրայում սովորող ուսանողը կամ արդեն մագիստրոսի որակավորում ունեցողը: Մյուս ծրագրում նման խնդիր չկա և այնտեղ ընդգրկված է քիմիա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Սոֆի Պետրոսյանը :

Տ. Վ. Ղոչիկյան – Ձեր ամբիոնում ՈւԳ աշխատանքներ կատարող ուսանողներ կան՞

-ՈւԳ աշխատանքով զբաղվում է 1 ուսանող:

Տ. Վ. Ղոչիկյան – Հարգելի գործընկերներ, ամբիոնի վարիչներ, եթե ուսանողը ՈւԳԸ- անդամ չէ, ապա նա չի կարող ամբիոնում ՈւԳ աշխատանք կատարել: Նա կարող է լաբորատորիայում որոշակի աշխատանքներ կատարել, բայց դա ոչ մի իրավական հիմք չունի ՈւԳ աշխատանք ներկայացնելու համար:

Բաց քվեարկությամբ՝ գիտական խորհուրդը հաստատեց

Շ. Ա. Մարգարյանի հաշվետվությունը

Տ.Վ. Ղոչիկյան- Այժմ անցնենք օրակարգի երկրորդ հարցին: Կատարված աշխատանքների մասին հաղորդում է ներկայացնում ՈւԳԸ- նախագահ քիմիայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Ջիլիկյան Անահիտը:(Ա. Ջիլիկյանի հաղորդումը աղուսյակային ձևով ներկայացվում է):

ՈւԳԸ նախագահին հարցեր ուղղեցին

1. Ռ. Պ. Մխիթարյան - Ձեր կազմակերպած «Ինչ՞որտեղ, երբ» խաղին որ ֆակուլտետներ էին մասնակցում և ով է հաղթել

Ջիլիկյան Ա. - Խաղին մասնակցում էին՝ աշխարագրության ֆակուլտետի, քիմիայի ֆակուլտետի և ֆարմացիայի ինստիտուտի ուսանողները: Հաղթեց Ֆարմացիայի ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանողուհին:

2. Ռ. Ս. Հարությունյան – Ինչ աշխատանքներ եք տարել առաջին կուրսեցիների հետ:

Ջ. Ա. - Առաջին կուրսեցիների հետ առաջին հանդիպման ժամանակ տեղեկացրել էինք, որ ցանկացած հարցի դեպքում կարող են դիմել ՈԻԳԸ-ն: Մի քանի ուսանող դիմել էին մաթեմատիկա առարկայի համար. մենք նրանց օգնել ենք և արդյունքը կիսամյակի գնահատականն էր:

3. Լ. Գաբրիելյան- Դուք դասընթացներ էիք կազմակերպել դպրոցականների համար: Ինչպես եք կատարել ընտրությունը:

Ջ. Ա. - Դասընթացը վերաբերվում էր 9-12 դասարանների աշակերտներին: Դասընթացին մասնակցելու համար մասնակիցները հանձնել են քննություն: Ընտրել ենք միջինից բարձր գիտելիքներ ունեցողներին: Մասնակիցները ունեցել են գրեթե նույն հմտությունները: Դասընթացները վարել են ուսանողները և մեզ օգնել է ընկեր Ալեքսանյանը:

Ա. Ս. Գալստյան – Հավելեմ. Մասնակիցների հավաքագրումից հետո, երկար ժամանակ զանգում էին տարբեր դպրոցներից և ցանկանում էին մասնակցել այդ դասընթացներին:

Ջ. Ա. - հետագայի համար ծրագրել ենք մի քանի խմբով իրականացնել այդ դասընթացները: Դասընթացի ավարտին մասնակիցներին տվել ենք հավաստագրեր: Դասընթացը կազմված է եղել տեսական և փորձարարական մասերից:

Տ. Վ. Ղուչիկյան – Աշակերտների հետ կատարվող աշխատանքներ իրականացնում է նաև Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնը նախկին մինչ բուհական վարչությունը: Ձեր կատարած աշխատանքները իրար հետ չեն համընկնում:

Ջ. Ա. -Ոչ, չեն համընկնում: Մենք այլ ֆորմատով ենք աշխատում:

Գիտական խորհուրդը դրական գնահատեց ՈւԳԸ-ն կատարած
աշխատանքները:

Քիմիայի ֆակուլտետի

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր
Տ. Վ. Ղռչիկյան

Նիստի

քարտուղար, դոցենտ
Մ. Ա. Սամվելյան